

**ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի պղնձի հանքավայրի շահագործման
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության
վերլուծություն**

1. Ներածություն

Լիճքի պղինձ-մոլիբդենային հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Լիճք գյուղից 0.5 կմ դեպի հարավ և Մեղրի քաղաքից 25 կմ դեպի հյուսիս-արևմուտք, 1800 – 2000 մ բարձրությունների վրա:

Լիճքի պղնձի հանքավայրի շահագործումն իրականացնում է «ԹԱԹՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ն, որը գրանցված է ՀՀ, Երևան, Երզնկյան փողոց 79 հասցեում: Շահագործման նախորդ թույլտվությունը «ԹԱԹՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ն ստացել էր 2013թ-ին:

Նախագծի համաձայն առաջնահերթ շահագործման բացահանքի հատակը կապակցվելու է 1750 մ բացարձակ նիշ ունեցող հորիզոնի հետ: Բացահանքի բացվող ամենաբարձր հանքաստիճանը ունենալու է 1880 մ բացարձակ նիշ: Հանքի զբաղեցրած տարածքը կազմելու է մոտ 26 հա:

Հանքավայրի հանքաքարը բեռնատար ավտոմեքենաներով կտեղափոխվի «Զանգեզուրի պղինձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ Քաջարանի հարստացուցիչ ֆաբրիկա:

«ԹԱԹՍԹՈՈՒՆ» ՍՊԸ մշակել է ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի պղնձի հանքավայրի ընդլայնված շահագործման նոր նախագիծ և բնապահպանական փորձաքննության համար ներկայացրել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն [1]:

2. ՇՄԱԳ նկարագրությունը

ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է 2015 թվականին, «Քոնսեկոարդ» ՍՊԸ-ի կողմից: ՇՄԱԳ-ը բաղկացած է ներածությունից, 10 բաժիններից, գրականության ցանկից, ծավալը կազմում է 103 էջ: ՇՄԱԳ-ն ունի 3 հավելված, տես [1]: Աշխատանքում բերված են շրջանի ներկայիս էկոլոգիական վիճակի շատ մակերեսային նկարագրությունը, հանքավայրի բացման, շահագործման և փակման ծրագրերի ընդհանուր նկարագիրը, բացահանքի շահագործման հնարավոր էկոլոգիական հետևանքները, անհրաժեշտ բնապահպանական միջոցառումները՝ ուղղված շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանը և բացառմանը [1]:

3. ՇՄԱԳ-ի թերությունները

Անհամապատասխանությունները և բացթողումները շրջակա միջավայրի առկա իրավիճակի գնահատման, ազդեցությունների կանխատեսումների, մեթոդական և մասնագիտական տեսանկյուններից:

Ստորև բերված են մի շարք էական թերությունների նկարագրությունները, որոնք առկա են ներկայացված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման»

հաշվետվության մեջ, տես [1]: (Պահպանված են սկրնադրյուրի՝ [1] հաշվետվություն համարակալումները):

1.8. Ջրային ռեսուրսներ: Ջրագրական ցանց. Բաժնում բերված են Լիճք և Մեղրի հիդրոլոգիական կայանների ջրագրական հիմնական քանակական տվյալները, սակայն հանքարդյունաբերական գոտու և հարակից հնարավոր ազդեցություն գոտիների գետավազանի մակերևույթային ջրերի հիդրոմորֆոլոգիական ներկայիս, **սկզբնական/անաղարտ/ վիճակը բավարար չափով ներկայացված չէ:** ՇՄԱԳ-ում հղում է արվում Մեղրի-Լիճքի հիդրոլոգիական դիտակետի տվյալների վրա, որը փակվել է 01.2002թ-ին [2]:

Հանքի շահագործման ընթացքում **կարող են տեղի ունենալ գետավազանի փտակային ցանցի հիդրոմորֆոլոգիական պայմանների էական փոփոխություններ,** որոնց արդյունքում ջրառի և հանքավայրից ներքև ընկած կայքերում **կարող են փոփոխվել ջրի էլքն ու էկոլոգիական թողքը:**

Գետերի ջրերի հիդրոքիմիական որակի տվյալներ նախատեսվող գործունեության ազդեցության գոտում բերված չէ, միայն հղում է կատարված ՀՀ ԲՆ «Հայէկոմոնիտորինգ» ՊՈԱԿ-ի «Շրջակա միջավայրի էկոլոգիական մոնիթորինգի արդյունքների մասին» 2014 թ. տարեկան տեղեկանքի վրա: Համաձայն բերված տվյալների Մեղրիգետ գետի ողջ հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս):

ՇՄԱԳ-ում գետավազանի մակերևույթային **ջրերի հիդրոկենսաբանական հետազոտություններ ընդհանրապես ներկայացված չեն, հիդրոկենսաբանական որակի վերաբերյալ տվյալներ չկան:**

Փաստացի գետավազանի մակերևույթային ջրերի էկոլոգիական վիճակի գնահատման երեք բաղադրիչներից հիմնականը՝ հիդրոկենսաբանականը ընդհանրապես բացակայում է ՇՄԱԳ-ում, իսկ երկրորդ բաղադրիչը՝ հիդրոմորֆոլոգիականը, ուսումնասիրված և ներկայացված է խիստ անբավարար, հիմնականում 15 տարվա վաղեմության տվյալների հիման վրա:

Մակերևույթային ջրերի հատակային նստվածքների բաղադրությունը մեծապես ազդում է ջրերի հիդրոքիմիական բաղադրության, հիդրոքիմիական և հիդրոկենսաբանական որակի վրա: Սակայն **գետավազանի մակերևույթային ջրերի հատակային նստվածքների քիմիական կազմի, հատակային ֆլորային, ֆաունայի, հատկապես ջրերի որակի հիմնական բնութագրիչ հանդիսացող հատակային մակրոանոդնաշարավորների տեսակային կազմի ուսումնասիրություններ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մեջ ընդհանրապես ներկայացված չէ,** տես [1]:

Այսպիսով, «ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի պղնձի հանքավայրի շահագործման» 2016 թվական հուլիս ամսին ներկայացրած «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» **հաշվետվությունը,** տես [1], **մակերևույթային ջրերի վիճակի գնահատման տեսանկյունից կազմված է խիստ թերի:** Մեղրի գետի ավազանի ջրերի որակի վերաբերյալ բերված տվյալները խիստ սահմանափակ են: Բերված տվյալները

չեն արտացոլում ներկայումս Մեղրի գետի գետավազանի վերին հոսանքի առկա էկոլոգիական իրավիճակը: Թերի տվյալների ու գնահատականների պատճառով Լիճքի հանքավայրի շահագործման և փակման փուլերում կոժվարանա և նույնիսկ գործնականում անհնարին կդառնա ավազանի ջրերի վրա հնարավոր ազդեցությունների բացահայտումն և ազդեցության էֆեկտների գնահատումը:

1.8. Ջրային ռեսուրսներ: *Լիճքի հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանները:* Բաժնում բերված է 1984-1985թթ. հանքավայրի կենտրոնական տեղամասում հիդրոերկրաբանական ուսումնասիրության արդյունքների հիման վրա գրունտային ջրերի խիստ ընդհանրական, հակիրճ բնութագրերը. *Հանքավայրի գրունտային ջրերը ըստ քիմիական կազմի կարբոնատային-կալցիումային են 0.5 գ/լ հանքայնացումով, իսկ ավելի ներքևի հորիզոններում սուլֆատային-հիդրոկարբոնատային, որոնք պարունակում են 1.2 գ/լ հանքայնացում* [1]: Նոր հետազոտությունների տվյալներ բերված չեն: Չի ներկայացված ջրերում անցումային և ծանր մետաղների, տոքսիկ տարրերի պարունակությունները: Սա էական բացթողում է:

Ներկայիս հղումային վիճակի տվյալների բացակայության պատճառով հետագայում, հանքավայրի շահագործման ընթացքում, հնարավոր չի լինի պարզել գրունտային և ընդհանրապես ստորերկրյա ջրերի բաղադրության վրա հանքի շահագործման ազդեցությունը:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

4.1. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը լեռնակապիտալ աշխատանքների ժամանակ

Բաժնում քննարկված է միայն *շրջակա օդային ավազանի վրա ազդեցությունը* (տես 4.1.1 բաժինը), չնայած աշխատանքները տևելու են 4 տարի: **Շրջակա միջավայրի կարևոր օբյեկտների՝ լանդշաֆտների և տարածքի հողային ծածկույթի էական փոփոխությունները, ընդհանրապես ներկայացված և գնահատված չեն:** Փաստացի **անտեսված է** «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փրձաքննության մասին» ՀՀ օրենքի (21.06.2014) 7-րդ հոդվածի 1 կետի (Գնահատման և փորձաքննության իրականացման ընթացքում դիտարկվում են ...) պահանջները [3]: Մասնավորապես անտեսված են 7-րդ հոդվածի 1 կետի 3-րդ, 5-րդ և 11-րդ ենթակետերի պահանջները.

3) հողը՝ նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը, կարգը, որակը, վիճակը, կազմը, աղտոտվածությունը, դեգրադացիան, բերրի շերտի օգտագործումը, հողերի այլ բնութագրերը),

5) ռելիեֆը, լանդշաֆտը, բնության հատուկ պահպանվող տարածքները, բնակավայրերի կանաչ գոտիները, միգրացիոն գոտիները և ուղիները,

11) ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնները, [3]:

Հողերի և լանդշաֆտների փոփոխությունների հարցը քննարկվել և ներկայացվել է միայն 4.2. Բաց հանքի շահագործում բաժնում:

4.2.Բացահանքի շահագործում : 4.2.1.Օդային ավազան բաժնում հայտնի մեթոդների օգտագործմամբ հաշվարկված և ներկայացված են փոշու և այլ աղտոտիչների արտանետումների հաշվարկները: Սակայն հատկապես փոշու տարածման այլ եղանակներ նույնպես առկա են. օրինակ մակաբացված հողաշերտերի հողմնահարումը և տարածումը մեծ շառավիղով հանքի տարածքից, ձյան ծածկույթի վրա նստող փոշու հողմնահարումը և ձյան հետ տարածումը մեծ շառավիղով հանքի տարածքից ձմեռային ամիսներին: Նշված եղանակներով հանքավայրի տարածքից փոշ տարածման բազմաթիվ դեպքեր են հայտնի, այդ թվում Լիճքին մոտ գտնվող հանքավայրերի տարածքից, օրինակ Լիճքվազի և Ագարակի հանքավայրերի տարածքից՝ հանգեցնելով հարակից տարածքների և գետավազանների ջրերի՝ Մեղրիգետի և Կարճևան գետերի ջրերի և հատակային նստվածքների աղտոտմանը ծանր մետաղներով և թունավոր տարրերով:

4.2.Բացահանքի շահագործում : 4.2.2. Ջրային ռեսուրսներ բաժնում ներկայացված է.

-Տեխնիկական ջրի օգտագործումը ամբողջությամբ հանդիսանում է անվերադարձ ջրօգտագործում:

-Ճանապարհների և հարթակների ջրցանը հաշվարկված է այնպես, որ նստեցվի փոշին և չառաջանա արտահոսք:

-Լեռնային զանգվածի խոնավացումը նույնպես չի կարող առաջացնել արտահոսք:

Սակայն ՇՄԱԳ հաշվետվության մեջ չի գնահատված լեռնային զանգվածի խոնավացման և փոշենստեցման համար օգտագործված ջրերի՝ դեպի ստորերկրյա ջրեր թափանցելու հնարավորությունը և չի ներկայացված ներթափանցման բացառումը հաստատող հաշվարկներ:

ՇՄԱԳ-ի 4.2.2.3. Մակերևութային հոսքաջրեր (անձրևաջրերի և ձնհալի ջրերի արտահոսքեր) ենթաբաժնում ներկայացված է.

- Բացահանքի տարածքում (ներբացահանքային ճանապարհը ներառյալ) անձրևաջրերի մի մասը հեռանում է ինքնահոս կերպով, իսկ մի մասն էլ հատակի ճեղքերի և դատարկությունների միջոցով ներծծվում է հողում:

- Առաջացած անձրևային և ձնհալի ջրերը ինքնահոս եղանակով հոսում են անձրևաջրերի մաքրման կառուցվածքներ, որտեղ ենթարկվում են մաքրման, կեղտաջրերը անցնում են երկաստիճան վերամաքրում գոիչներում, իսկ մաքրված ջրերն օգտագործվում են բացահանքի ճանապարհների ջրման համար:

Այս դեպքում նույնպես չի գնահատված անձրևաջրերի և ձյան հալոցքաջրերի՝ դեպի ստորերկրյա ջրեր թափանցելու հնարավորությունը և չի ներկայացված ներթափանցման ներթափանցման բացառումը:

4.2.2. Ջրային ռեսուրսներ բաժնում քննարկված չէ հանքավայրի բաց եղանակով շահագործման հետևանքով հանքավայրի շրջակա գոտու գետավազանի հիդրոմորֆոլոգիական պայմանների էական փոփոխությունները, որոնց արդյունքում կխախտվեն գետերում ջրահոսքերի հիդրոլոգիական ռեժիմներն, կփոխվեն հիդրոլոգիական քանակական, այդ թվում էկոլոգիական հոսքերի բնութագրերը, կառաջանա էկոլոգիական թողքերի ապահովման և հետևաբար ջրառի քանակների և ժամանակային ռեժիմի փոփոխությունների պահանջ:

ՇՄԱԳ-ում առկա է շատ կարևոր բացթողում. Լիճքի հանքավայրը գտնվում է Մեղրիգետի վերին հոսանքներում՝ Մեղրի քաղաքի և այլ բնակավայրերի խմելու ջրամատակարարման համակարգի սանիտարական գոտում: Հանքավայրի շահագործումը կարող է ազդեցություն թողնել Մեղրիգետ նաև համայնքների խմելու ջրամատակարարման համակարգի վրա: Այս հարցը ունի լրացուցիչ հետազոտության կարիք: Հանքավայրի շահագործումը հնարավոր է իրականացնել միայն խմելու ջրի որակական և քանակական բնութագրիչների վրա ազդեցության բացակայության վերջնական ապացուցված լինելու դեպքում:

ՇՄԱԳ-ում առկա է երկրորդ կարևոր բացթողումը. Մեղրիգետ գետը՝ Լիճք բնակավայրից մինչև Գոզգոզ վտակի հետ միախառնման կայքը, հանդիսանում է ռիսկային ջրային մարմին, (ՌՋՄ-24. առանձնացվել է ՓՀԷԿ-ի շահագործման հետևանքով Մեղրիգետի՝ 1700-1460 մ բարձրության վրա գետի էկոլոգիական թողքի չպահպանվելու պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 4,6 կմ է, տես [2]): Մեղրիգետում ջրի սակավության առկա իրավիճակում, հանքավայրի շահագործման հետևանքով ջրերի որակի վրա առաջացող ազդեցության էֆեկտները անհամաչափորեն մեծ կլինեն հաշվարկային գնահատականներից: Մեծ է հավանականությունը, որ կառաջանա ազդեցության գումարային էֆեկտ, ինչը կարող է հանգեցնել Մեղրիգետի էկոլոգիական հավասարակշռության խաթարմանը և բնապահպանական լուրջ խնդիրների առաջացմանը: Ներկայացված խնդիրը ՇՄԱԳ-ում ընդհանրապես քննարկված չէ:

Գումարային ազդեցության գնահատման հաշվետվության պահանջը ընդունվել է ՀՀ կառավարության կողմից ս.թ-ի հուլիսի 29-ի N 29 արձանագրային որոշմամբ, տես հավելված 2 -6, [4]: Քանի որ ՇՄԱԳ-ը ներկայացվել էր նշված որոշումից անմիջապես առաջ, գումարային ազդեցության գնահատման հաշվետվություն ՇՄԱԳ-ում ընդհանրապես ներկայացված չէ: Սակայն քանի որ ՇՄԱԳ-ը դեռևս չի ստացել փորձաքննական եզրակացություն, անհրաժեշտ է այն հետ ուղարկել լրամշակման:

Ներկայացված ՇՄԱԳ-ում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փրձաքննության մասին» ՀՀ օրենքի (21.06.2014) 7-րդ հոդվածով (Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը) **ազդեցության ենթակա շրջակա միջավայրի 13 օբյեկտներից ու բնութագրերից ընդհանուր առմամբ քննարկված և ներկայացված են ընդամենը 9-ը, որոնցում առկա են վերևում ներկայացված թերություններն ու բացթողումները:**

ՇՄԱԳ-ում քննարկված և ներկայացված չեն միջազգային առաջավոր փորձի և ՀՀ միջազգային պարտավորություններից բխող շրջակա միջավայրի հետևյալ օբյեկտներն ու բնութագրերը.

- Գյուղատնտեսական մշակաբույսերի վրա ազդեցությունները, որը անմիջականորեն կապված է բնակչության սոցիալ տնտեսական վիճակի և առողջապահական հիմնահարցերի հետ
- Կլիմայի փոփոխության վրա ազդեցությունը
- Կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքների ազդեցությունը
- Տարբեր գործոնների գումարային ազդեցությունը
- Էկոհամակարգային ծառայությունների վրա ազդեցությունը
- Էկոհամակարգային ծառայությունների նվազման հետևանքով տրտեսական և սոցիալական վնասների գնահատումը:

Լեռնակապիտալ աշխատանքների և հանքավայրի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների, օբյեկտների և դրանց վրա ազդեցության էֆեկտների մոնիտորինգ, մշտադիտարկում ընդհանրապես նախատեսված չէ: Հանքի փակման ծրագրի հիմնադրույթները (տես ՇՄԱԳ, 10-րդ բաժին) բաժնում ներկայացված է Մշտադիտարկումների ծրագիր ենթաբաժինը 1 էջի սահմանում (տես ՇՄԱԳ, 10.4 ենթաբաժին): Սակայն ենթաբաժնում ներկայացված է ընդհանուր բնույթի թեզիսներ մշտադիտարկումների մասին: Մոնիտորինգի, մշտադիտարկման ծրագիր ՇՄԱԳ-ում փաստացի ներկայացված չէ, ինչը օրենքի պահանջի անտեսում է:

ՇՄԱԳ քննարկման և փորձաքննական եզրակացություն ստանալու, գործունեություն սկսելու կամ շարունակելու գործընթացում կարևոր օղակ է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հանքարդյունաբերողների ներկայացրած հանքավայրերի շահագործման աշխատանքային նախագծերի ՇՄԱԳ-ներին տրվող՝ միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունները: Այդ եզրակացությունների մեծագույն մասը կրում է ձևական բնույթ:

Լիճքի պղնձի հանքավայրի շահագործման “ԹԱԹՍԹՈՌ” ՍՊԸ-ի 2013 թ-ին ներկայացրած աշխատանքային ծրագրի ՇՄԱԳ-ին, որը քիչ է տարբերվում 2016 թվականին ներկայացվածից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն: Որպես փորձաքննական պահանջ ներկայացված է.

Հանքավայրի շահագործումն իրականացնել ՀՀ հողային և ընդերքի օրենսգրքերի համաձայն:

Ակնհայտ է, որ նշված միակ պահանջը փորձաքննական չէ: Այն գործող օրենսդրության պահանջն է, որը ևս մեկ անգամ հիշեցնելու կամ հնչեցնելու համար հատուկ ստեղծված ՊՈԱԿ-ի և բյուրոկրատական տևական գործընթացի անհրաժեշտություն չկա: Նմանատիպ «փորձաքննական» պահանջներով բազմաթիվ ՇՄԱԳ հաշվետվությունների տրվում է դրական եզրակացություն, առանց ստուգելու

ՇՄԱԳ-ում բերված տվյալներն ու գնահատականները: Ըստ էության, ներկայումս «Փորձաքննական պահանջը» կրում է խիստ ձևական բնույթ:

Այդ եզրակացությունների մեծագույն մասը իրական փորձաքննություն չեն անցնում բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, կրում են ֆորմալ բնույթ: Եզրակացությունների տրման գործընթացը ներկայիս սցենարով և բովանդակությամբ ավելորդ բյուրոկրատական պրոցեդուրա է, որը միաժամանակ պարունակում է կոռուպցիոն մեծ ռիսկեր: Այդ պատճառով առկա է ՊՈԱԿ-ի կողմից տրված «Փորձաքննական եզրակացությունների» բովանդակության և դրանց տրման գործընթացի վերլուծությունների և գնահատման անհրաժեշտություն: «Փորձաքննական եզրակացությունների» տրման գործընթացն ու բովանդակությունը անհրաժեշտ է մոդեռնիզացնել և համապատասխանեցնել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փրձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին և զաղափարախոսությանը:

Ամփոփում/ եզրակացություն

ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի պղնձի հանքավայրի շահագործման «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» հաշվետվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայացված այն չի համապատասխանում ՀՀ գործող օրենսդրության և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից բխող պահանջներին:

Ներկայացված ՇՄԱԳ-ը պետք է հետ ուղարկվի լրամշակման, հաշվի առնելով նաև ՀՀ կառավարության 2016թ.-ի հուլիսի 29-ի N 29 արձանագրային որոշման պահանջները, տես հավելված 2-6, [4]:

Նշված որոշումը բավականաչափ խիստ պահանջներ է ներկայացնում հանքարդյունաբերության որլորտում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» հաշվետվություններին՝ բովանդակային և մասնագիտական հիմնավորվածության ու մշակվածության առումներով և կունենա դրական ազդեցություն ՇՄԱԳ-ների որակի վրա:

15.10. 2016

Սեյրան Մինասյան

1. ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի պղնձի հանքավայրի շահագործման Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, 2015թ.:

2. "Հարավային ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին" ՀՀ կառավարության 26.05.2016թ. N 539 - ն որոշում և "2016-2021 թվականների միջոցառումների ծրագիր հարավային ջրավազանային տարածքի կառավարման պլանի" (Հավելված ՀՀ կառավարության 2016թ. մայիսի 26-ի նիստի N 20 արձանագրային որոշման):

3. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փրձաքննության մասին» ՀՀ օրենքի (21.06.2014):
4. "Հայաստանի հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի նիստի N 37 արձանագրության 10-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման մեջ լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին"ՀՀ կառավարության 29.07.2016թ. N 29 - ն որոշում, հավելվածներ 2-6: